առաջարկութեանը միջնորդ դատարանի մասին։

Ասում են, որ իշխան Բիսմարկ ծաղրում է այն հանգամանքը, որով Ֆրանսիական կառավարութիւնը վերաբերվում է յունական գործերին։ Ինչպէս երևում է, գերմանական և աւստրո-ունգարական կառավարութիւնները առաջարկել են պետութիւններին ի նկատի ունենալով Թիւրքիայի վերջին շրջաբերականը, նորից բանակցութիւններ սկսել Բ. Դրան հետ, որպէս զի նա վերջնականապէս որոշէ այն զիջումների չափը, որ նա անելու է յոգուտ Յունաստանի։ Այդ առաջարկութիւնը ընդունված է պետութիւններից, իսկ անգլիական մինիստրութիւնը յայտնեց համայնքների ժողովին, որ Անգլիան համաձայնել է յիշեալ առաջարկութեան հետ։

Աւստրո-ունգարական գերմանացիները և ունգարացիները շարունակ ընդդիմադրում են կոմս Տաաֆէի մինիստրութեանը։ Յայտնի է, որ աւստրո-ունգարական սահմանադրութիւնը գերմանացիներին և ունգարացիներին մի առանձին առաւելութիւն է տալիս միւս ազգութիւնների դէմ։ Այդ է պատճառը, որ Աւստրիայի հպատակ գերմանացիները և ունգարացիները այժմեան սահմանադրութեան եռանդոտ պաշտպաններ են։ Այդ կուսակցութիւնը աւստրիական սահմանադրական լեզուով անուանվում է ազատամիտ, ձգտում է պահպանել սահմանադրութիւնը, թշնամաբար է վերաբերվում Աւստրիայի սլավեան ազգութիւններին և աշխատում է, որ նրանք գերմանացիների և ունգարացիների հետ հաւասար իրաւունքներ չունենան։ Նոյն կուսակցութիւնը անուանվում է կենտրոնական, իսկ այժմեան սահմանադրութեան թշնամի սլավեանների ներկայացուցիչները անուանվում են յետադիմականներ։

Յետադիմական կուսակցութեան կարծիքով, ազատամիտ—կենտրոնական կուսակցութիւնը ձգտում է գերմանացնել երկրի բոլոր ազգաբնակութիւնը, իսկ վերջինները երկիւղ են կրում, որ սլավեանները, յետադիմականները, չը վնասեն նրանց քաղաքական առաւելութեանը։

Հասկանալի է ուրեմն, թէ գրմանացիները և ունգարացիները մինչև ո՞ր ասիճան թշնամաբար պէտք է վերաբերվին Տաաֆէի մինիստրութեանը, որ ոչ թէ միայն չէ հալածում սլավեաններին, այլ ձգտում է նրանց հետ բարեկամութիւն հաստատել և երկրի գլխաւոր ոյժերից մէկն է համարում նրանց։ Իսկապէս կոմս Տաաֆէ չէ կամենում փոփոխել այժմեան սահմանադրութիւնը, այլ յարաբերութիւն ունի չեխերի հետ, հասկանում է և խոստովանվում է, որ սլավեանները զրկված են և այսքանը բաւական է ազատամիտ-կենտրոնական կուսակցութեան համար, որ նա այդ մինիստրին իր թշնամի համարի։

ՆԱՄԱԿ ՖՐԱՆՍԻԱՅԻՑ

—

Փարիզ, յունվարի 6

Երէկ կատարվեցաւ պարոն Բլանքիի (Blanqui) թաղման հանդէսը, որը կարճ ժամանակի հիւանդութիւնից յետոյ կնքեց կեանքը թողնելով իր սկսած գործը անկատար—վերականգնել կոմունան ամբողջ Ֆրանսիայում։ Այս պարոնը 1871 թ-ին առաջին և յանդուգն գործողներից մէկն էր։ Կոմունիստները յաղթվելով հասարակապետականներից՝ ցրվեցան Եւրոպայի ամէն կողմերը, իսկ որոնք բռնվեցան՝ բոլորը աքսորվեցան Նոր-Կալէդոնիա և այլ հեռաւոր տեղեր։ Սրանցից շատերը ոչնչացան չը կարողանալով տանել անսովոր օդը և թշուառութիւնը օտարութեան մէջ։ Բայց երբ ֆրանսիական կառավարութիւնը ներեց սրանց յանցանքը 1878 թ., մեծ մասը վերադարձան, որոնց փարիզը ընդունեց մեծ ուրախութեամբ և օգնեց առատութեամբ կարօտեալներին։ Սրանք փոքր ժամանակից յետոյ կազմեցին բազմաթիւ ընկերութիւններ և ունեցան շուտով սեպհական լրագիրներ։ Այս լրագիրներից մէկն էր «Ni Dieu, ni maître», որ դուրս էր գալիս ամեն օր Բլանքիի խմբագրութեամբ. բայց բաժանորդներ շատ չունենալու պատճառով դարձաւ շաբաթական թերթ, որ կարծում ենք, կը վերջանայ շուտով ինչպէս իր խմբագիրը։ Բլանքին կարճահասակ, թուլակազմ և կենդանի աչքերով մի մարդ էր. յայտնի էր ինչպէս լաւ ճառախօս, ընդունակ և աշխատասէր։ Սրա խօսքերը շատ փաղաքուշ և համոզիչ էին, մի խօսքով, այս մարդուն կարելի էր անուանել ֆրանսիական Մաձզինի (Mazzini)։ Թաղման հանդէսը նշանակուած էր ժամի տասներկուսին Իտալական բուլվարի վրա № 25, այստեղ էր բնակվում հանգուցեալը շատ համեստ կերպով։ Երէկ, ժամի տասին այնտեղ գտնվեցայ, արդէն այդ ժամին ահագին բազմութիւն էր խռնվել դրան առաջ, չը նայելով սաստիկ ցրտին. իսկ ժամի տասնումէկին ամբողջ փողոցի և հրապարակի վրա ասեղ գցելու տեղ չը կար։ Բազմութիւնը բոպէ առ բոպէ աճում էր անդադար. ամեն տեսակ աշխատաւորներ խմբեր կազմած՝ մտնում էին տանը կարմիր դրօշակներ պարզած, որոնց վրա կախված էին կաղնու տերևներից պատրաստած պսակներ։ Դրօշակների թիւը հասնում էր մինչև քառասուն, իսկ պսակների վրա կարելի էր կարդալ զանազան վերագրութիւններ, օր. սիրելի Բլանքիին սոցիալիստ հիւսների ընկերութեան կողմից.—ճշմարտութեան պաշտպանին սոցիալիստ կանանց կողմից—և այլն։

Մխիթարական նամակների, հեռագիրների, ծաղկեայ փնջերի և պսակների հաշիւը չը կար, որ հասնում էին Ֆրանսիայի բոլոր քաղաքներից և գաւառներից սգաւոր ընտանիքին։ Ժամի տասներկուքին իջեցրին դագաղը բեռնաւորված փընջերով և ղրին կառքի վրա. մի քանի բոպէից յետոյ սկսվեց յուղարկաւորութիւնը։ Այս միջոցին երևեցաւ Բոշֆորը որին ժողովուրդը ողջունեց աղաղակելով,—Vive Rochefort, vive la République Française, vive la Révolution sociale։—Բազմութեան մէջ, որի թիւը հասնում էր մինչև երեսուն հազարի, կային շատ նշանաւոր անձինք, ինչպէս Լուի Բլան, Լիսագարէ *), օրիորդ Լուիզա Միշէլ, և այլն։ Այս վերջինը մանաւանդ յայտնի է իր քաջութեամբ 71 թ. յեղափոխութեան մէջ և իբրև ամենակատաղի թշնամուհի պարոն Գամբետտայի։

Վերջապէս ննջեցեալը հասցրին մինչև Pere-Lachaise կոչուած հանգստարանը, որտեղ մօտ տասը հոգի դամբանական ճառեր կարդացին։ Ճառախօսներից մէկը—Eudes—վերջացրեց հետևեալ խօսքերով. «O Blanqui! ô victime éternelle, ta vie, tes souffrances, tes exemples, tes conseils, nous jurons, sont à jamais inscrits, dans notre memoire.» այս միջոցին լսվեցաւ բազմութեան կողմից—nous jurons—իսկ շատերը գոչեցին «Vive la République Francaise, Vive Blanqui.» Այսպէս անչափ և խաղաղ վերջացաւ Թաղման հանդէսը ժամի երեքին, որից յետոյ ամեն մարդ քաշվեցաւ իր տեղը հանգիստ հոգով....

«Le Rappel» լրագրում կարդում ենք հետևեալը «մի քանի երիտասարդ օֆիցերներ ուղևորվեցան կօպենհագէնից գէպի Աթէնք յոյն զօրքի մէջ ծառայելու Թիւրք-յունական մօտակայ պատերազմի պատճառով։

Այսօր առաւօտեան մինչև ժամի չորսը ձիւն եկաւ այստեղ. ցուրտը բաւականին զգալի է։

Ռուսաց թղթադրամը 100 բուբլին արժէ այժմ 257 ֆրանկ, որը շատ քիչ է մանաւանդ նրանց համար, որոնք քիչ են ստանում տնական։

«Le Republique francaise» գրում է, որ Navarais նաւը մտել է Բրեստի նաւահանգիստը բերելով Նոր-Կալէդոնիայից կօմունարդներին, որոնք կը մտնեն Փարիզ յաւաջիկայ գիշերը։

Լանդիշ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Փարիզից հեռագրում են, որ գինեվաճառների դատաստանական ժողովի ժամանակ Գամբետտա, արտասանելով իր ճառը, ի միջի այլոց ասաց, որ նա, քննելով գինեվաճառների դրութիւնը, գտնում է, որ նրանց վերաբերեալ օրէնքները չափազանց խիստ են և պէտք է փոփոխվին։ Ֆրանսիական ժողովուրդը, ասել է Գամբետտա, փորձված է. նա կարող է զանազանել իսկական գործողութիւնները դատարկ խօսքերից։ Սեպտեմբերի 4-ից սկսված ֆրանսիական դեմոկրատիան ապացուցեց, որ նա չէ կամենում անիշխանական և անպտուղ լինել։ Սենատի և պատգամաւորների ժողովի անդամների ապագայ ընտրութիւնները յաղթանակ կը լինեն ազգի, հանրապետութեան և հայրենիքի համար։ Գամբետտայի այդ ճառը անընդհատ ծափահարութիւններով ծածկվեցաւ։

—Լօնդոնից հեռագրում են, որ Գլադստոնի առաջարկութեան համեմատ համայնքների ժողովը սկսեց դահլիճի ճառի պատասխանի երկրորդ ընթերցանութիւնը։ Ժողովի անդամներից մէկը առաջարկեց պատասխանի մէջ ցանկութիւն յայտնել, որ բասուտօների երկրի մէջ (Աֆրիկայում) շուտով դադարեցնվի արիւնհեղութիւնը, բայց նա յետ առաւ իր առաջարկութիւնը, երբ կառավարութիւնը յայտնեց, թէ նա սպասում է յարմար դէպքին բասուտօների հետ համաձայնութիւն կայացնելու համար։ Այնուհետև պատասխանը երկրորդ ընթերցանութենից յետոյ միաձայն ընդունվեցաւ։

—Աթէնքից լրագիրներին հեռագրում են, որ յունական պատգամաւորների ժողովի նախագահը հեռագիրներով հրաւիրեց նահանգների մէջ գտնված բոլոր պատգամաւորներին յունվարի 27-ին Աթէնք վերադառնալ ժողովի նիստերը չաւրունակելու համար։

—Պրուսական սէյմի յունվարի 11-ի նիստի ժամանակ, երբ քնվում էր Հռենոս գետի և Նագէի մէջ եղած երկաթուղու հարցը, պատերազմական մինիստրը յայտնեց, որ անհրաժեշտ է յիշեալ ճանապարհի համար երկրորդ գիծ կառուցանել, որովհետև Ֆրանսիան բոլոր ջանքերը գործ է դնում իր երկաթուղիները լաւացնելու համար։ Անդամներից մէկը յայտնեց, որ պէտք է զգուշութեամբ հետևել Ֆրանսիայի գործողութիւններին, մանաւանդ որ նա բացառական միջոցներ է գործ դնում, որպէս զի իրան ապահովէ Գերմանիայի յարձակմունքից։

—«Հաւասի» ընկերութեանը Մադրիդից հեռագրում են, որ կարլիստների մէջ մեծ անհամաձայնութիւն է տիրում։ Նրանցից շատերը բաժանվեցին Դոն-Կարլոսից։

—Փարիզից հեռագրում են, որ ֆրանսիական սենատը ընտրեց փոխ-նախագահներ՝ Բամպօնին, Լեվոյէին, Կալմոնին և Դելաբոին, իսկ պատգամաւորների ժողովի փոխ-նախագահներ ընտրվեցան՝ Բրիսոն, Ֆիլիպպօտտ և Սոնատ։ Պատգամաւորների ժողովի նախագահ ընտրվելու ժամանակ 376 ձայներից Գամբետտա ստացաւ 262 ձայներ։

—Դուբլինից յունվարի 8-ից հեռագրում են. Պարնելի գործի պատճառով մեղադրվածների պաշտպաններից վերջինը այսօր վերջացրեց իր պաշտպանողական ճառը, որ հասարակութեան ծափահարութիւններով ծածկվեցաւ։ Պրոկուրոլը մերժելով պաշտպանողների ասածները, առաջարկեց դատարանին ապացուցանել իր վճռով հասարակութեանը, որ սոցիալական վարդապետութիւնը Անգլիայի մէջ արմատներ չը պէտք է գցէ։

—Անգլիական համայնքների ժողովի մէջ, ինչպէս հեռագրում են Լօնդոնից, մինիստր Դիլկ յայտնեց հետևեալը. պետութիւնները բանակցում են յունական խնդրի խաղաղ ճանապարհով լուծելը ապահովելու համար։ Միջնորդ դատարանի նախագիծը թողված է առանց հետևանքների։ Բ. Դռնից նոր շրջաբերական է ստացված, բայց անկարելի է ասել այժմ, թէ պետութիւնների խորհրդակցութիւնները ինչ հետևանքներ կունենան։

—Կալկուտայից «Times» լրագրին հաղորդում են, որ Կալկուտայի մէջ եղած դատաստանի լուրը, որ մի ժամանակ հերքվեցաւ, այժմ հաստատվում է։ Այդ դատաստանի գործը այժմ քննվում է արևմտեան Հնդկաստանի մէջ եղած Կալկուտայի պետութեան դատարանի մէջ։ Բան և եօթ մարդ բրամիններ և մահմեդականներ դատարի են եղել զէնք հաւաքել, պատերազմ սկսել Անգլիայի հետ և կոտորել բոլոր քրիստոնեաներին։ Դաւադիրները 3000 մինչև 5000 մարդ կողմնակիցներ են գտել և երեք անգամ ժամանակ են նշանակել ապստամբութիւնը սկսելու համար և ամեն անգամ մի պատահական դէպք նրանց խանգարել է նրանց գիտաւորութեան կատարելուն, մինչև որ դաւադրութիւնը յայտնվել է տեղական իշխանութեանը։ Դատարանում կանչված վկաները ցոյց են տուել հաւաքած զէնքերը և իրանց ժողովների տեղերը։

—«Diritto» լրագիրը հաղորդում է, որ Բ. Դուռը պետութիւնների ներկայացուցիչներին մեկնեց այն պատճառները, որ նրան թոյլ չեն տալիս ընդունել միջնորդ դատարանի մասին առաջարկութիւնը։ Այդ պատճառները հետևեալներն են. 1) Թիւրքիան, իբրև մի անկախ պետութիւն, կարող է բարեկամական համաձայնութիւն կայացնել պետութիւնների հետ, բայց անկարող է ենթարկվել այդ պետութիւններից կազմված դատարանի վճիռներին և 2) Թիւրքիայի ստրատեգիական դրութիւնը և նրա մի քանի նահանգների էտնոգրաֆիական պայմանները այնպէս են, որ անկարելի է նրանց բաժանել Թիւրքաց կայսերութենից։

—Այն հանգամանքը, որ Բ. Դրան վերջին շրջաբերականը լաւ տպաւորութիւն գործեց Վիէննայի քաղաքական շրջանների մէջ, մեկնում են նրանով, որ Բ. Դուռը ցանկանում է նոր բանակցութիւններ սկսել պետութիւնների հետ։ Դրանից երևում է, որ Թիւրքաց կառավարութիւնը պատրաստ է ցունաստանին աւելի զիջումներ անել, քան թէ նա որոշել էր անցեալ տարվայ հոկտեմբերի 23-ի իր շրջաբերականով։ Առանց այդպիսի պատրաստականութեան Թիւրքիայի կողմից նոր բանակցութիւնները ոչինչ նշանակութիւն չէին ունենայ։

—Հռոմում լինելու է շուտով մի մեծ ժողովրդական ժողով։ Այդ առիթով իտալական «Capitale» լրագրի մէջ տպված է Տրիեստի ժողովրդական մանաժողովի նամակը, որ առաջարկում է Գարիբալդիին ժողովի ժամանակ ներկայացուցիչ լինել իտալական այն երկիրների, որոնք դեռ ևս միացած չեն Իտալիայի հետ։ Նոյն լրագրի մէջ տպված է Գարիբալդիի պատասխանը, որով նա կոզմնակի կերպով յայտնում է իր համաձայնութիւնը։ Մի այլ նամակով Գարիբալդի համաձայնութիւն է յայտնում նախագահել յիշեալ ժողովին։

—Հռոմից լրագիրներին հեռագրում են. Այստեղի քաղաքական շրջանները հաւատացած են, որ իտալական կառավարութիւնը թոյլ չի տայ Գարիբալդիին Հռոմում լինելի ազգային մեծ ժողովի ժամանակ ներկայացուցիչ լինել Տրիեստի այն կուսակցութեան, որ կամենում է այդ քաղաքը Իտալիայի հետ միացած տեսնել։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 21 յունվարի։ „Правит. Вѣстн.“ լրագրի մէջ տպված է բարձրագոյն հրաման սենատոր Կօվալէվսկուն՝ վերաքննել Օրէնբուրգի նահանգը և նրա գլխաւոր-նահանգապետի փարչութիւնը։

ՍԱՆ-ՖՐԱՆՑԻՍԿՕ, 20 յունվարի։ Սյստեզ հասաւ Սանդվիչեան կղզիների թագաւոր Կալակաուա։ Նա մտադիր է Եւրոպայի և Ասիայի մի քանի երկիրների մէջ ճանապարհորդել։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 21 յունվարի։ „Новости“ լրագիրը լսել է, որ Սովկասեան մաքսային հիմնարկութիւնները շուտով կանցնեն Ֆինանսների մինիստրութեան իրաւասութեան տակ։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 20 յունվարի։ „Голосъ“ լրագրին յունվարի 20-ից օդէսսայից հեռագրում են. իրաւունք է ստացված համալսարանի մէջ ուսանողների ընթերցարան բաց անելու համար։ Նոյն լրագրին հաղորդում են խարկովից. Տեխնոլոգիական ինստիտուտը կը բացվի աշունքին, բոլոր կարգադրութիւնները արված են։ Հոկտեմբերի 10-ին բացվել են առաջին երկու կուրսերը։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 21 յունվարի։ „Новости“ լրագիրը լսել է, որ փոստային և հեռագիրների մինիստրութեան մէջ քննվում է մի առաջարկութիւն փոստային մասների և բաժինների մէջ պարբերական հրատարակութիւնների տարաբաժանութիւն ընդունելու մասին։

Խմբագիր—Հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

*) Այս պարոնը գրել է կոմունայի պատմութիւնը, որը յայտնի է իբրև շատ արդար և անաչառ գրուածք։